պետին տեղեկացրեց նաեւ, որ վերջերս Լառնակայում բացվել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող, որի բացման արարողությանը ներկա են եղել Կիպրոսի Հանրապետության իշխանությունների ներկայացուցիչները եւ բազմաթիվ հայեր:

Վերջում Նորին Սրբությունը հաջողություններ մաղթեց Կիպրոսի նախագահին իր գործունեության մեջ՝ Տիրոջ օգնականությունը հայցելով երկու բարեկամ ժողովուրդների համար:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, երկու երկրների դեսպանները, պաշտոնատար այլ անձինք:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ ՇՉՈՐՍ ԴԱՎԹՅԱՆԻՆ

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով պարգեւատրեց պետական եւ մտավորական գործիչ տիար Շչորս Դավթյանին՝ ի գնահատություն Հայոց Եկեղեցուն եւ մասնավորապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին բերած ազնիվ ծառայությունների:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

«Առանձնակի ուրախություն է Հայրապետիս համար անդրադառնալ մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայություններին: Դուք գնահատելի աջակցություն եք բերել Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու, Նորավանքի եւ Սիսիանի շրջանում գտնվող վանքերի ու եկեղեցիների վերանորոգման աշխատանքներին, հետամուտ լինելով բարեպաշտ մեր ժողովրդի հոգեւոր կյանքի պայծառությանը: Եկեղեցական մեր ժառանգության հանդեպ նախանձախնդրությունը դրսեւորված է նաեւ Ձեր ստեղծագործական գործունեության մեջ»,- ասվում է Հայրապետական Սրբատառ Կոնդակում:

Մեծարյալն իր շնորհակալությունը հայտնեց Հայոց Հայրապետին՝ բարձր գնահատանքի արժանացնելու համար:

Հանդիսության ավարտին ներկաներին իր օրհնությունը բերեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն անդրադարձավ մեծարյալի տարիների վաստակին՝ բնութագրելով նրան իբրեւ հայաշունչ, ազգային ոգու տեր մի մարդ, որ իր ամբողջ գիտակցական կյանքում նախանձախնդիր եղավ մեր ազգային սրբությունների պահպանությանն ու վերականգնմանը:

Հանդիսությանը ներկա էին Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, Մայր Աթոռի միաբաններ, մեծարյալի հարազատները: